ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«17» հունիս, 2026թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Սիմոնյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդարական նախաձեռնության կարգով ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Գրությանը կից ներկայացվում են՝

1. Նախագծերը (հիմնական զեկուցող՝ Վահագն Ալեքսանյան)
2. Նախագծերի ընդունման հիմնավորումը,
3. Գործող օրենքներում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում ենք օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Ալեն Սիմոնյան

Արուսյակ Ջուլհակյան

Վահագն Ալեքսանյան

Ալխաս Ղազարյան

Թագուհի Ղազարյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 05-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 218-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «մեկից երեք» բառերը փոխարինել «երկուսից հինգ» բառերով,

2) 2-րդ մասում «երեքից յոթ» բառերը փոխարինել «չորսից ութ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 219-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «երեքից վեց» բառերը փոխարինել «չորսից ութ» բառերով,

2) 2-րդ մասում «չորսից ութ» բառերը փոխարինել «հինգից տաս» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 220-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «տասնապատիկից երեսնապատիկի» բառերը փոխարինել «քսանապատիկից հիսնապատիկի» բառերով, «մեկից երեք» բառերը փոխարինել «երկուսից հինգ» բառերով,

2) 2-րդ մասում «երկուսից հինգ» բառերը փոխարինել «երեքից վեց» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասում «երեքից վեց» բառերը փոխարինել «չորսից ութ» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Առկա իրավիճակը

ՀՀ քրեական օրենսգրքի 218-221-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու, պահանջելու, տալու առաջարկ ներկայացնելու կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելու համար, ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելու, խոստանալու կամ տալու համար, ընտրակաշառքի միջնորդություն անելու և հանրաքվեի կամ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքների ամփոփումը թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալու) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու համար:

Վերոնշյալ հանցագործությունների հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ ընտրակաշառքը ժողովրդավարական համակարգի կարևորագույն սպառնալիքներից մեկն է: Այն խաթարում է

քաղաքացիների ազատ կամարտահայտությունը, նվազեցնում ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը և նպաստում կոռուպցիոն մեխանիզմների պահպանմանը:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացված ընտրական բարեփոխումներին զուգահեռ դեռևս առկա են ընտրակաշառքի դրսևորումներ, որոնք բացասաբար են ազդում ընտրությունների ազատ և արդար բնույթի վրա:

ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սույն թվականի հունիսի 7-ին Հայաստանի Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին ընդառաջ և դրանից հետո իրավապահ մարմինները պարբերաբար հայտնում են ընտրակաշառքի դեպքերի բացահայտումների մասին:

2022 թվականի հուլիսից ուժի մեջ մտած քրեական օրենսգիրքը հստակ սահմանում է՝ ընտրակաշառք տալը, ստանալը կամ դրան միջնորդելը համարվում են քրեական հանցագործություններ: Օրենսդրության համաձայն՝ ընտրակաշառք է համարվում ընտրողին կամ հանրաքվեի մասնակցին գումար, գույք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տրամադրելը՝ նրա քվեարկության վրա ազդելու նպատակով: Սա կարող է արտահայտվել ինչպես ուղղակի վճարումների, այնպես էլ տարբեր «թաքնված» ձևերով՝ նվերների, ծառայությունների կամ արտոնությունների տրամադրմամբ: Մասնավորապես, քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածը հստակ սահմանում է ընտրակաշառք ստանալու իրավական հետևանքները. «Հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ 1-3 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ 1-2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ 1-3 տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով»:

Իսկ ընտրակաշառք տալն ավելի ծանր պատասխանատվություն է նախատեսում.

Քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածը սահմանում է՝ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տալը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-6 տարի ժամկետով:

«Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 4-8 տարի ժամկետով»:

Քրեական օրենսգրքի 220-րդ հոդվածով կարգավորվում է նաև ընտրակաշառքի միջնորդությունը: Այսինքն՝ պատժվում է ոչ միայն ուղղակի տվողն ու ստացողը, այլև այն անձը, ով կազմակերպում է կամ հեշտացնում այդ գործընթացը:

Քրեական օրենսգրքի մեկ այլ՝ 221-րդ հոդվածով, պատասխանատվություն է նախատեսված նաև բարեգործության արգելքը խախտելու համար:

Առաջարկվող կարգավորումը

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով ամրագրված իրավակարգավորումներով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 218-221-րդ հոդվածները ենթարկել այնպիսի փոփոխության, որով նշված հանցագործության պատժաչափը ավելի է խստացվելու:

Օրենսդրական փոփոխության իրականացումը՝ ընտրակաշառքի ձևով արտահայտվող հանցագործությունների պատժաչափը խստացնելով, կապահովի լրացուցիչ երաշխիքներ վերոնշյալ հանցագործությունների նվազման համար, քանի որ դրա հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ ընտրակաշառքը ժողովրդավարական համակարգի կարևորագույն սպառնալիքներից մեկն է և այն խաթարում է քաղաքացիների ազատ կամարտահայտությունը, նվազեցնում ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը և նպաստում կոռուպցիոն մեխանիզմների պահպանմանը, որն իր հերթին ազդում է ժողովրդավարության վրա:

Չնայած ընտրական գործընթացների կատարելագործման ուղղությամբ իրականացվող բարեփոխումներին՝ ընտրակաշառքի դրսևորումները շարունակում են մնալ ընտրական համակարգի կարևոր խնդիրներից մեկը:

Գործող քրեական պատասխանատվության միջոցները բավարար կանխարգելիչ ազդեցություն չեն ապահովում, ինչի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել խստացնելու պատասխանատվությունը ինչպես ընտրակաշառք տվողների, այնպես էլ ստացողների նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված իրավախախտումները հանդիսանում են սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված այնպիսի արարքներ, որոնք խաթարում են քաղաքացիների ազատ կամարտահայտությունը, ընտրությունների արդարությունը և ընտրական համակարգի նկատմամբ հանրային վստահությունը, առաջարկվող կարգավորումներով նախատեսվում է նաև սահմանել, որ նշված իրավախախտումների համար դատապարտված անձը, անկախ դատվածության մարված կամ վերացված լինելու հանգամանքից, իրավունք չունենա զբաղեցնելու պետական ծառայության պաշտոն, համայնքային ծառայության պաշտոն, պետական վարչական պաշտոն, համայնքային վարչական պաշտոն, պետական հայեցողական պաշտոն կամ համայնքային հայեցողական պաշտոն:

Նշված սահմանափակումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետական և համայնքային ծառայության, պետական վարչական և պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք իրականացնում են հանրային իշխանության գործառույթներ, ուստի նրանց նկատմամբ պետք է գործեն բարձր բարեվարքության, ազնվության և հանրային վստահության չափանիշներ:

Հիմք ընդունելով հանրային ծառայության առանձնահատուկ բնույթը՝ առաջարկվող սահմանափակումները նպատակ ունեն պաշտպանել հանրային ծառայության բարեվարքությունն ու հեղինակությունը, ապահովել պետական և համայնքային կառավարման նկատմամբ հանրային վստահությունը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ ընտրակաշառքի դեպքերի նվազում, ընտրական իրավախախտումների կանխարգելման արդյունավետության բարձրացում, ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության աճ, քաղաքական մրցակցության առավել արդար պայմանների ձևավորում, պետական և համայնքային կառավարման համակարգերի նկատմամբ հանրային վստահության ամրապնդում, հանրային ծառայության ոլորտում բարեվարքության և ազնվության բարձր չափանիշների ապահովում, հանրային իշխանության իրականացման հետ կապված պաշտոններում հանրության կողմից վստահություն վայելող և բարձր բարոյական հեղինակություն ունեցող անձանց ներգրավման խթանում:

Տեղեկանք
Քրեական օրենսգրքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 218. Ընտրակաշառք ստանալը

1. Հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ ~~մեկից երեք~~ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ ~~մեկից երեք~~ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~երեքից յոթ~~ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 219. Ընտրակաշառք տալը

1. Հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելը, խոստանալը կամ տալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~երեքից վեց~~ չորսից ութ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~չորսից ութ~~ հինգից տասս տարի ժամկետով:

Հոդված 220. Ընտրակաշառքի միջնորդությունը

1. Ընտրակաշառքի միջնորդությունը՝ ընտրակաշառքի շուրջ ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելը, ընտրակաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում ընտրակաշառքի առարկան ընտրողին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը կամ ընտրակաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը՝

պատժվում է տուգանքով՝ ~~տասնապատիկից երեսնապատիկի~~ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ ~~մեկից երեք~~ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ ~~մեկից երեք~~ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~երկուսից հինգ~~ երեքից վեց տարի ժամկետով:

Հոդված 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը

1. Հանրաքվեի կամ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշները կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և 3000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութի կամ առարկայի) տալը

(խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~երեքից վեց~~ չորսից ութ տարի ժամկետով:

(221-րդ հոդվածը փոփ. 09.06.22 ՀՕ-240-Ն)